ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Հ. Դավթյան

«05» 09 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

IX դասարան

Առաքելյան Վարսենիկ Մխիթարի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ՈՒՍՏԱՐԻ

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

1. 1. Դասարանը բաղկացած է 14 աշակերտից՝ 7 աղջիկ, 7 տղա: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, թեև լինում են որոշ ընդհարումներ: Քանի որ, տարիքը համարվում է անցումային, վարքը խիստ հակասական է: Հիմնականում աշակերտները պատրաստակամ են, նախաձեռնող. ցուցաբերում են ակտիվություն և՛ դասապրոցոսում, և՛ դասից դուրս:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը

բ/ Իրականացնել դասղեկի ժամերը, վարել անհատական զրույցներ, հետևել ուստարվա ընթացիիկ առաջադիրմությանը:

գ/ Հետևել էլեկտրոնային մատյանին և էլեկտրոնային օրագրին,

դ/ Համագործակցել ծնողների հետ, անհարաժեշտությա դեպքում հրավիրել դպրոց:

ե/ Զրուցել դժվար դաստիարակվող աշակերտների հետ:

զ/Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

է/Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. Հայեցի դաստիարակություն

Հայեցի դաստիարակության հիմքը սերն ուպատկառանքն է մայրենի լեզվի և հայրենիքի նկատմամբ, ինչը փորձում ենք արժևորել և վեր հանել՝ կազմակերպելով դասախոսություններ, զեկույցներ: Հայեցի դաստիարակության համար ծանոթացնել մեր մեծերին, այցելել հայագիտական կենտրոններ:

3.1Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը կարևոր է արժեհամակարգի ձևավորման, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն

.տակ ունի բարոյական արժեքներ սերմանել: Այդ իսկ պատճառով աշակերտին պետք է գաղափար տալ քրիստոնեության մասին, ծանոթացնել հոգևոր արժեքներին, կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ, կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության կարևորությունն է երեխաների մեջ սեր առաջացնելն դեպի արվեստն իր բազմաժանր ճյուղերով, սեր և հարգանք գեղեցիկի նկատմամբ: Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել , թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Լինելով պատերազմական երկիր՝ կարևոր է դեռ դպրոցական նստարանից սեր առաջացնել նախ հայրենիքի նկատմամբ,ապա՝ մյուս բոլոր արժեքների՝ անընդհատ խոսելով մեր պատմության փառահեղ հաղթանակներից և պարտություններից: Այելություններ կազմակերպել պատմամշակութային նշանակության կոթողներ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունն ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահպանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը:Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները՝ պ ա հ պ ա ն ե լ ո վ ա ռ ո ղ ջ ո ւ թ յ ո ւ ն ը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա

...ունել ներկայիս դժվար պայմաններում:Յուրաքանչյուր աշակերտ պետք իմանա՝ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել ...անապազօրյա հացը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի: Տանը, դպրոցում և այլուր պահպանեն մաքրություն:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:Երեխաներին ծանոթացնել երկրագնդի բնապահպանական հիմնախնդիրներին: Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք: Ճանաչել բուսական և կենդանական աշխարհը: Մասնակցել ծառատունկերի:

3.7 Դպրոց-ընտանիք կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում էպետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց- ընտանիք կապը: Ամուր հիմքերի վրա դնելով դպրոց-ընտանիք կապը՝ մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ապա հաղթանակն ապահովված է:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Դպրոց հաճախելու կանոններ, նոր առարկաների մասին իրազեկում և ծանոթացում	Սեպտեմբեր 2	Դասղեկ, աշակերտներ
II	Նոր ուստարվա նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքները, նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նորուստարվա անելիքների ծրագրում	Սեպտեմբեր 9	Դասղեկ, աշակերտներ
III	Պատմական ակնարկ Հայաստանի մասին	Սեպտեմբեր 16	Դասղեկ, աշակերտներ
IV	«Անկախ Հայաստանն իմ պատկերացմամբ»շարադրություն	Սեպտեմբեր 23	Դասղեկ, աշակերտներ
V	44 օրյա պատերազմն ու ես	Սեպտեմբեր 30	Դասղեկ, աշակերտներ
VI	Ուսուցիչն ինձ համար…	Հոկտեմբեր 7	Դասղեկ, աշակերտներ
VII	**Ինչպե՞ս լինել լավ ընկեր**	Հոկտեմբեր 14	Դասղեկ, աշակերտներ
VIII	Ո՞ւմ եմ համարում լավ մարդ/ հանդես գալ զեկույցով	Հոկտեմբեր21	Դասղեկ, աշակերտներ
IX	Երբ աշխատանքը միայն ուրախություն է, ի՞նչ եմ դառնալու	Նոյեմբեր 4	Դասղեկ, աշակերտներ
X	Իմ վարքը տանը և շրջապատում	Նոյեմբեր 11	Դասղեկ, աշակերտներ
XI	Ո՞ւմ կուզեի նմանվել	Նոյեմբեր 18	Դասղեկ, աշակերտներ
XII	«Հրաշքը» ֆիլմի դիտում հատվածներ	Նոյեմբեր 25	Դասղեկ, աշակերտներ
XIII	**Բևեռն ապեռներ, ի՞նչ է երկրաշարժը:**	Դեկտեմբեր 2	Դասղեկ, աշակերտներ
XIV	Դասարանի ամանորյա ձևավորում	Դեկտեմբերի 9	Դասղեկ, աշակերտներ
XV	Իմ սիրելի տոնը	Դեկտեմբերի 16	Դասղեկ, աշակերտներ
XVI	Սանտան բացահայտվում է	Դեկտեմբերն 19	Դասղեկ, աշակերտներ
XVII	Սուրբ Ծնունդն իմ կյանքում	Հունվար 13	Դասղեկ, աշակերտներ
XVIII	Համացանցն իմ կյանքում, մեկ շաբաթ առանց համացանցի, կատարել դիտարկումներ	Հունվար 20	Դասղեկ, աշակերտներ
XIX	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:Հայոց բանակ	Հունվար 27	Դասղեկ, աշակերտներ ՆԶՊ ուսուցիչ
XX	Պատերազմ տեսած մանուկները	Փետրվար 3	
XXI	Հայ առաքելական եկեղեցու տոնացույցը: Տյառնընդառաջ	Փետրվար 10	Դասղեկ, աշակերտներ
XXII	Թումանյանի հերոսների բարոյականությունը	Փետրվար 17	Դասղեկ, աշակերտներ

XXIII	Մայրենի լեզվի կարևորությունը	Փետրվար 24	Դասղեկ, աշակերտներ
XXIV	Մարտի 1-ը քաղաքացիական պաշտպանության միջազգային օր:	Մարտ 3	
XXV	Կանանց միջազգային տոն	Մարտ 10	Դասղեկ, աշակերտներ
XXVI	Միջազգային մարդասիրական իրավունք: Ի՞նչ է դա, ինչպե՞ս է այն կիրառվում	Մարտ 17	Դասղեկ, աշակերտներ ՆԶՊ ուսուցիչ
XXVII	Պաշտպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը	Մարտ 24	Դասղեկ, աշակերտներ
XXVIII	Ավետման տոնի խորհուրդը	Ապրիլ 7	Դասղեկ, աշակերտներ
XXIX	Շրջակա միջավայրի պահպանությունը, անցկացնել ակցիա՝ «Մաքուր պահենք մեր շրջապատը»	Ապրիլ 14	Դասղեկ, աշակերտներ
XXX	Հիշում եմ և պահանջում... Կազմակերպել ֆիլմերի դիտում	Ապրիլ 21	Դասղեկ, աշակերտներ
XXXI	<<Արտակարգ իրավիճակ>> հասկացությունը, որո՞նք են դրսևորումներն ու անելիքները	Ապրիլ 28	Դասղեկ, աշակերտներ ՆԶՊ ուսուցիչ
XXXII	Մարդը և օրենքը	Մայիս 5	Դասղեկ, աշակերտներ ՆԶՊ ուսուցիչ
XXXIII	Ամառային ընթերցանության կարևորության մասին զրույց	Մայիս 11	Դասղեկ, աշակերտներ
XXXIV	Ցտեսություն դպրոց	Մայիս 19	Դասղեկ, աշակերտներ